Ի գիտություն հասարակությանը

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը, նպատակ ունենալով տեղեկացնել հանրությանը հանձնաժողովի 2019 թվականի աշխատանքային ծրագրով 3-րդ եռամսյակում նախատեսված աշխատանքների մասին, ստորև ներկայացնում է այդ աշխատանքների հակիրճ բովանդակությունը:

Նախատեսվում է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2017 թվականի դեկտեմբերի 13-ի №541Ն որոշմամբ հաստատված՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից սպառողներին վաճառվող էլեկտրական էներգիայի սակագների և էլեկտրական էներգիայի բաշխման ծառայության մատուցման սակագների հաշվարկման մեթոդիկայում փոփոխությունների կատարում՝ նպատակ ունենալով «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի փոփոխություններին համահունչ հստակեցնել ըստ էլեկտրական էներգիայի բաշխման և մատակարարման գործառույթների հաշվարկվող ընկերության անհրաժեշտ հասույթի կազմում ներառված ծախսերի և այլ բաղադրիչների դասակարգման և բաշխման հետ կապված հարցերը:

Էլեկտրական ցանցին միացման գործընթացի կազմակերպման արդյունավետության բարձրացման և միացման ժամկետների պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու նպատակով նախատեսվում է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման տարեկան ցուցանիշների ուսումնասիրություն, համապատասխան վերլուծական տեղեկանքի կազմում:

Նախատեսվում է իրականացնել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման եռամսյակային ցուցանիշների ուսումնասիրություն, ամփոփում և հրապարակում հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում: Նշված գործառույթի իրականացումն ուղղված է էլեկտրական ցանցին միացման գործընթացի իրականացման ընթացակարգի վերլուծությանը, միացման ժամկետների պահպանման վերահսկողությանն ու դրանց խախտման պատճառների որոշմանը: Գործառույթի իրականացման նպատակն է բարձրացնել էլեկտրական ցանցին միացման

գործընթացի կազմակերպման արդյունավետությունը:

Սակագներում ներառման ենթակա ներդրումների օգտակար և օգտագործվող ծավալի գնահատման, անարդյունավետ և ոչ հիմնավոր ներդրումների ծավալի բացահայտման և սպառողներին առաքվող էլեկտրական էներգիայի և բնական գազի սակագներում դրանք չներառելու նպատակով նախատեսվում է իրականացնել «Հայաստանի էլեկտրական ցանցեր», «Գազպրոմ Արմենիա», «Միջազգային էներգետիկ կորպորացիա», «Հաշվարկային կենտրոն», «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն», «Քոնթուր Գլոբալ Հիդրո Կասկադ» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից 2018 թվականին կատարված ներդրումների փաստացի ծավալների ուսումնասիրություն, արդյունքների ամփոփում և հրապարակում հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում:

«Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքին համապատասխան՝ մինչև սույն թվականի հոկտեմբերի 1-ը կմշակվի ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2020 թվականի գործունեության ծրագիրը և կներկայացվի ՀՀ Ազգային ժողով:

Եռամսյակային արդյունքներով կամփոփվեն և հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում կհրապարակվեն՝

- սպառողների սպասարկման որակի ցուցանիշների վերաբերյալ էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից ներկայացված տեղեկատվությունը,
- սպառողների դիմում-բողոքների վերաբերյալ էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից ներկայացված տեղեկատվությունը,
- էլեկտրաէներգետիկական, գազամատակարարման համակարգերի և ջրային ոլորտի կարգավորվող ընկերությունների գործունեության տեխնիկատնտեսական ցուցանիշները: